ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2011 թվականի N 937 -Ն

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Ավելացված արժեքի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ, 33-րդ և 43.1-ին հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հաստատել հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքը հարկային մարմիններին ներկայացնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2011 թ. հուլիսի 12
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հուլիսի 7-ի N 937 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան դուրս գրված (գնորդներին տրված) և (կամ) մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի (այսուհետ՝ տեղեկանք), օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան ճշգրտված տեղեկությունների ներկայացման, օրենքի 43.1-ին հոդվածի պահանջներին համապատասխան հաշվանցումների կատարման կարգը: Սույն կարգին համապատասխան տեղեկությունները (այդ թվում՝ ճշգրտված) հարկային մարմին կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով (ինտերնետային կապի միջոցով) և (կամ) թղթային տարբերակով:

2. Հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվում՝

1) էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների (այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով դուրս գրված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկ վճարողի կողմից անվավեր ճանաչված հարկային հաշիվների) վերաբերյալ.

2) ձեռք բերած ապրանքների, ստացած ծառայությունների գծով էլեկտրոնային եղանակով ստացած այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնց ստացումը, մինչև տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը, վավերացված է հարկ վճարողի էլեկտրոնային ստորագրությամբ:

3. Էլեկտրոնային եղանակով ստացած հարկային հաշվի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացումը համարվում է հարկային հաշվի վերաբերյալ տեղեկության ներկայացում: Մինչև տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետի օրը (ներառյալ) էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները ներառվում են տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկում և հաշվանցվում են օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափերով: Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ ստացողի կողմից ներկայացվում են սույն կարգին համապատասխան: Տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետից հետո էլեկտրոնային եղանակով դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցումը կատարվում է սույն կարգով սահմանված հաշվետու ժամանակաշրջանում օրենքով սահմանված՝ դեպքերում, կարգով և չափերով:

4. ԱԱՀ վճարող համարվող անձինք յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային մարմիններին ներկայացնում են տեղեկանք այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում ցույց տրված հարկվող շրջանառության

մեծությունը (առանց ԱԱՀ-ի) գերազանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չափը: Տեղեկանքում ներառվում (արտացոլվում) են տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի համար դուրս գրված (գնորդներին տրված) և մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ:

5. Տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում ներառվում են տեղեկություններ (բացառությամբ սույն կարգի 2-րդ կետում նշված հարկային հաշիվների և սույն կարգով սահմանված այլ դեպքերի)՝

1) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների գծով տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի դուրս գրած (գնորդներին տրված) հարկային հաշիվների վերաբերյալ.

2) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ապրանքների և (կամ) մատուցված ծառայությունների գծով հաշվետուին հաջորդող ժամանակաշրջանում դուրս գրված այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք դուրս են գրվել մինչև հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի փաստացի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամկետի ավարտը.

3) նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների գծով նախկինում դուրս գրած այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնց վերաբերյալ տեղեկություններ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված տեղեկանքներում չեն ներկայացվել.

4) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և (կամ) ստացված ծառայությունների դիմաց տվյալ հաշվետու ժամանակաշրջանում մատակարարներից ստացված հարկային հաշիվների վերաբերյալ.

5) տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և (կամ) ստացված ծառայությունների դիմաց հաշվետուին հաջորդող ժամանակաշրջանում մատակարարներից հարկ վճարողի ստացած այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք ստացվել են մինչև հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի փաստացի ներկայացումը, բայց ոչ ուշ, քան տեղեկանքի ներկայացման համար օրենքով սահմանված վերջնաժամկետի ավարտը.

6) նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և (կամ) ստացած ծառայությունների գծով նախկինում ստացված այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնց վերաբերյալ տեղեկություններ նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված տեղեկանքներում չեն ներկայացվել.

7) այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ԱԱՀ վճարող համարվողների կամ ԱԱՀ վճարող չհամարվողների կողմից դուրս են գրվել օրենքի 19-րդ հոդվածի պահանջների խախտումով.

8) ֆիզիկական անձանց ստացած այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնք անմիջականորեն վերաբերվում են ֆիզիկական անձի կողմից իրականացված՝ օրենքով ապրանքի մատակարարում համարվող գործարքներին, այդ գործարքների համար ֆիզիկական անձի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ:

6. Գործարքի իրականացմանը հաջորդող որևէ հաշվետու ժամանակաշրջանում հարկային հաշվի դուրսգրումը հիմք չէ ԱԱՀ-ի պարտավորության առաջացման պահը հարկային հաշվի դուրսգրման հաշվետու ժամանակաշրջան տեղափոխելու համար:

7. Սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են կատարել նախկինում ներկայացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ճշգրտումներ (ներկայացնել ճշգրտված տեղեկություններ)՝ բացառությամբ օրենքի 29-րդ հոդվածով և օրենքի 43.1-ին հոդվածի վերջին պարբերությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ ճշգրտված տեղեկությունները վերաբերվում են հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված հաշվետու ժամանակաշրջաններին: Տեղեկությունների

ճշգրտումներ չեն կարող կատարվել նաև այն դեպքերում, երբ ճշգրտումները վերաբերում են «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1-ին հոդվածի երրորդ մասով սահմանված ժամկետից ավելի վաղ ժամանակաշրջանին և առաջացնում են այդ ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկի ճշգրտման անհրաժեշտություն:

2. ԱԱՀ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

8. Տեղեկանք ներկայացվում է սույն հավելվածի ձևին համապատասխան (ձևը կցվում է): Տեղեկանքը լրացվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը պահվում է ԱԱՀ վճարողի մոտ, իսկ մյուս օրինակը ներկայացվում է ԱԱՀ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն:

ԱԱՀ վճարող չհամարվող անձինք կարող են սույն կարգին համապատասխան ներկայացնել ճշգրտված կամ չներկայացված տեղեկություններ (տեղեկանքներ) այն ժամանակաշրջանների համար, որում նրանք համարվել են ԱԱՀ վճարող:

9. ԱԱՀ վճարողը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար տեղեկանքը ներկայացնում է իր հաշվառման վայրի հարկային տեսչություն՝ մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի տեղեկանքներից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված տեղեկանք, իսկ մյուսները՝ ճշգրտված տեղեկանք:

3. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերած ապրանքների և ստացված ծառայությունների գծով ստացված այն հարկային հաշիվները, որոնք ստացվել են տեղեկանքի ներկայացումից հետո կամ չեն ներառվել տվյալ հաշվետու ժամանակաշրջանի տեղեկանքում, ներառվում են հաշվետուին հաջորդող ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում:

11. Հարկային հաշվում ԱԱՀ-ով չհարկված (հարկից ազատված, հարկման օբյեկտ չհանդիսացող, հաստատագրված վճարով հարկվող և այլն) գործարքներ նշված լինելու դեպքում տեղեկանքի առաջին և երկրորդ մասերի աղյուսակի 6-րդ սյունակում լրացվում է տվյալ հարկային հաշվով հատուցման ենթակա ընդհանուր գումարը (ներառյալ ԱԱՀ-ով չհարկված շրջանառությունը)՝ առանց ԱԱՀ-ի:

12. Տեղեկանքում ներառված որևէ հարկային հաշվի վերաբերյալ տեղեկություններում միայն մատակարարի կամ միայն գնորդի անվանումն անճշտություններով (տառասխալներով, փոքրատառերի փոխարեն՝ մեծատառերով, այլ լեզվից հայերենի տառադարձման հետ կապված սխալներով պայմանավորված անճշտություններով) լրացնելու դեպքում տվյալ հարկային հաշվի տեղեկությունը չի համարվում սխալ ներկայացրած, եթե ճիշտ է լրացված հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):

13. Տեղեկանքում որևէ հարկային հաշվում հատուցման ենթակա ընդհանուր գումարը սխալ նշելու դեպքում տվյալ հարկային հաշվի վերաբերյալ տեղեկությունները չեն համարվում

սխալ ներկայացված, եթե տեղեկանքում ճիշտ է լրացված տվյալ հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը:

14. Սահմանված կարգով և ժամկետում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար տեղեկանք չներկայացվելու դեպքերում տվյալ հաշվետու ժամանակաշրջանի դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները համարվում են ԱԱՀ վճարողի կողմից չներկայացված: Այդ հաշվետու ժամանակաշրջանի դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են հետագա որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) տեղեկանքը ներկայացվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ.

2) տեղեկություններ սույն կարգին համապատասխան չեն կարող ներկայացվել.

3) տեղեկությունները, սույն կարգի 16-րդ կետին համապատասխան, պետք է ներառվեն այլ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում:

15. Տեղեկանքում՝ դուրս գրված կամ ստացված առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններում սխալներ ինքնուրույն հայտնաբերելու դեպքերում (բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի) ԱԱՀ վճարողն այդ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացնում է ճշգրտված տեղեկանք: Ճշգրտված տեղեկանքում ներառվում են առաջին և երկրորդ մասերում նախկինում ճիշտ ներկայացված և ճշգրտված տեղեկությունները: Ճշգրտված տեղեկանք կարող է ներկայացվել նաև այն դեպքերում, երբ հարկային մարմնի կողմից անցկացված կամերալ ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ առանձին հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվել են սխալներով և ԱԱՀ վճարողը գրավոր տեղեկացվել է դրա մասին:

16. ԱԱՀ վճարողի կողմից դուրս գրված կամ ստացված այն հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, որոնց տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով չներկայացնելու փաստն արձանագրվել է հարկային մարմնի կողմից անցկացված կամերալ ուսումնասիրությամբ, ներառվում են ԱԱՀ վճարողին գրավոր տեղեկացման օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանի կամ հետագա որևէ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող տեղեկանքում:

17. Որևէ հաշվետու ժամանակաշրջանի տեղեկանքն օրենքով սահմանված ժամկետից ուշ (հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ից ուշ) ներկայացնելու դեպքում՝ դրանում ներառված՝ մատակարարներից ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարներն օրենքով սահմանված դեպքերում, չափով և կարգով հաշվանցվում են այն հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացվող ԱԱՀ-ի հաշվարկով, որի ընթացքում այդ տեղեկանքը ներկայացվել է:

18. Տեղեկանքներ չեն կարող ներկայացվել հարկային մարմնի կողմից ստուգված կամ ստուգվող ժամանակաշրջանների համար:

19. Ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված այն հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները, որոնց վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ (այդ թվում՝ ճշգրտված) չեն ներկայացվել կամ որոնց վերաբերյալ ներկայացված տեղեկությունները չեն համապատասխանում հարկային հաշվում արտացոլված տվյալներին (վավերապայմաններին), բացառությամբ սույն կարգի 13-րդ կետում նշված դեպքի, հաշվանցման ենթակա չեն:

20. Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան օտարերկրյա անձի փոխարեն հարկային պարտավորություններ կրելիս՝ օրենքի 20-րդ հոդվածին համապատասխան դուրս գրվող հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները միաժամանակ ներառվում են տեղեկանքի առաջին և երկրորդ մասերում: Օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան օտարերկրյա անձի փոխարեն հարկային պարտավորություն կրելիս հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկությունները ներառվում են այն հաշվետու ժամա-

նակաշրջանի (կամ հետագա որևէ ժամանակաշրջանի) տեղեկանքում, որում մատակարարի անունից փաստացի դուրս է գրվել հարկային հաշիվը:

21. Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից տեղեկանք ներկայացվելու դեպքում տեղեկանքի 1.1-ին կետում լրացվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը կամ «Սոցիալական ապահովության քարտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված տեղեկանքի համարը (այսուհետ՝ սոցիալական քարտի համար) կամ անձնագրի սերիան և համարը:

22. Հարկ վճարողի հաշվառման համար չունեցող ֆիզիկական անձի անունով հարկային հաշիվ դուրսգրված լինելու դեպքում տեղեկանքի «Հարկ վճարողի հաշվառման համարը» սյունակում (3-րդ սյունակ) լրացվում է ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը կամ անձնագրի սերիան և համարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

_____ հարկային տեսչություն

Փաստաթղթի հերթական համարը _____

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՏԵՂԵԿԱՆՔ

ԴՈՒՐՍ ԳՐՎԱԾ (ԳՆՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ) ԵՎ (ԿԱՄ) ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հարկ վճարողի հաշվառման համարը										
1.1. Ֆիզիկական անձի սոցիալական քարտի համարը կամ անձնագրի սերիան և համարը										
1.2. ԱԱՀ վճարողի հաշվառման համարը										
2. Հաշվետու ժամանակաշրջանը	տարեթիվը					ամիսը			եռամսյակը	
3. Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր) անունը, ազգանունը	4. Իրավաբանական անձի անվանումը									

Հաշվետու ժամանակաշրջանի դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ

N N ը/կ	Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր) անունը, ազգանունը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Հարկային հաշվի սերիա-համարը	Հարկային հաշվի դուրսգրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	Հատուց-ման ենթակա ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)	ԱԱՀ-ի գումարը (դրամ)	Նշում-ներ
1	2	3	4	5	6	7	8

Հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանի ստացված հարկային հաշիվների վերաբերյալ

N N ը/կ	Իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատեր) անունը, ազգանունը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Հարկային հաշվի սերիա-համարը	Հարկային հաշվի դուրսգրման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը	Հատուցման ենթակա ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի (դրամ)	ԱԱՀ-ի գումարը (դրամ)	Նշում-ներ
1	2	3	4	5	6	7	8

Կազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Հաշվապահ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Տեղեկանքի ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը _____ _____
20 թ. (լրացվում է հարկային տեսչության կողմից)